«Շին-ՏԱԼԳ փորձագետ» ՍՊԸ
(Նախագծերի փորձաքննություն)
ԱՐՏՈՆԱԳԻՐ ՔՊԼ - 001277

03 նոյեմբերի 2025թ.

«Հաստատում եմ»

Տնօրեն Գ.Գրիգորյան

(ստորագրություն)

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ հ. Գ-90/ԱՀ-25

*ՕԲՅԵԿՏ – ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնքի, «Մարալիկ բնակավայրի Հ. Շահինյան փողոց, 6-րդ նրբանցք հ. 5 հասցեի թիվ 1 դպրոցի վերանորոգման աշխատանքների նախագիծ» օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների*

Պատվիրատու՝
«ՀԻԴՐՈԷԿ» ՍՊԸ
(ՀՎՀՀ № 00528216)

Նախագծող՝
«ՀԻԴՐՈԷԿ» ՍՊԸ

Նախագծման հիմքը.

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 23112023-08-0044 վկայականը,
2. Մարալիկի թիվ 1 դպրոցի վերանորոգման աշխատանքների առաջադրանքը,
3. «Սեդրակ Մուրադյան» ա/ձ-ի կողմից 29.07.2021թ.-ին և «Սեյսմանախագիծ» ՍՊԸ-ի կողմից 31.07.2025թ-ին տրված շենքի մասին տեխնիկական վիճակի մասին եզրակացությունները,
4. Պատվիրատուի կողմից կնքված «ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ -25/5» ծածկագրով պայմանագիրը:

## *1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն*

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, «Մարալիկ բնակավայրի Հ. Շահինյան փողոց, 6-րդ նրբանցք հ. 5 հասցեի թիվ 1 դպրոցի վերանորոգման աշխատանքների» նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնք կազմված են թվով չորս գրքերից, որոնցում ներառվել են.

Գիրք – 1. Ճարտարապետաշինարարական մաս,

Գիրք – 2. Մարզա և հանդիսությունների դահլիճ,

Գիրք – 3. Ինժեներական մասեր,

Գիրք – 4. Նախահաշիվ, ծավալաթերթ:

Սույն փորձաքննությունը պարզաբանում է ներկայացված նախագծային փաթեթի համապատասխանությունը ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին՝ տրամադրելով ***պարզ*** փորձաքննություն, որի եզրակացությունը ներկայացնում ենք ըստ համապատասխան մասերի:

Ներկայացված փաստաթղթերը մշակվել են դպրոցի համար կազմված վերանորոգման աշխատանքների առաջադրանքի հիման վրա:

Առաջադրանքը կազմված է երկու մասերից՝

1. Ճարտարապետաշինարարական մաս /ուսումնական երկու մասնաշենքեր և մարզա և հանդիսությունների դահլիճ/,
2. Ինժեներական մասեր:

Ներկայացված աշխատանքային նախագծով տրվում է առաջին փուլով նախատեսված աշխատանքների՝ ճարտարապետաշինարարական և ինժեներական մասերի, փորձաքննության եզրակացությունը:

## *2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ*

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի Մարալիկի թիվ 1 դպրոցը գտնվում է ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկի Հ. Շահինյան փողոց, 6-րդ նրբանցք հ. 5 հասցեում, որը կառուցվել է 1980-ական թվականներին տիպային նախագծով:

Քննարկվող դպրոցական համալիրը կազմված է թվով երկու ուսումնական մասնաշենքերից և մարզա ու հանդիսությունների դահլիճներից, որոնք տաքանցումով կապված են իրար հետ:

Դպրոցի տարածքում առկա են օժանդակ շինություններ, որոնց վերաբերյալ փորձագիտական պարզաբանումներ, սույն եզրակացությունում չեն ներառված:

### *2.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐ*

❖ **2.1.1** - Ուսումնական «Ա» մասնաշենքը հատակագծում ուղղանկյունաձև է և ունի 72,75x13,40 մ արտաքին չափեր: Այն երկհարկանի է, որի հարկերի բարձրություններն են 3,3 մ:

Ըստ տեխնիկական վիճակի մասին եզրակացության և չափագրական գծագրերի ուսումնական «Ա» մասնաշենքի համար կոնստրուկտիվ սխեման լուծված է քարե կրող պատերով, կոմպլեքս կոնստրուկցիաներով համակարգը, որի ծածկերը հավաքովի ե/բետոնյա բազմանցք սալերով է: Տանիքը քառալանջ է, ծածկույթը՝ թիթեղից:

Ըստ ներկայացված նախագծի մասնաշենքում նախատեսվել են ստորև աշխատանքները՝

**ա) Քանդման աշխատանքներ / ներքին/.**

- Կազմաքանդել ներքին պատերից հին ներկանյութը, կերամիկական սալիկները,
- Հատակների շերտերը,
- Փայտյա դռները իր մասերով,
- Մետաղապլաստե պատուհանները իր մասերով:

**բ) Վերանորոգման աշխատանքներ / ներքին/.**

- Ներքին հարդարում, սվաղում, ներկում, սալիկապատում,
- Դռների և պատուհանների տեղադրում,

- Սան.հանգույցների վերանորոգում,
- Հատակների տեղադրում:

գ) **Արտաքին վերանորոգման աշխատանքներ.**
- Պատերի որմնախարսխի նորոգում,
- Պատերի տուֆաշարվածքի մակերևույթի մաքրում ավազաշիթով,
- Հորվիարների վերականգնում:

դ) **Տանիքային աշխատանքներ.**
- Փայտյա կավարամածի հին փայտանյութի փոխարինում և փայտյա չորսուների ավելացում,
- Փայտամածի մշակում հակահրդեհային և անտիսեպտիկ պաշտպանական քուքերով,
- Նոր տանիքածածկույթի տեղադրում գունավոր թիթեղից՝ КП21-0,5 մակնիշի:

❖ **2.1.2** - Ուսումնական «Դ» մասնաշենքը հատակագծում ուղղանկյունաձև է և ունի 72,75x13,40 մ արտաքին չափեր: Այն երկհարկանի է, որի հարկերի բարձրությունները են 3,3 մ:

Ըստ տեխնիկական վիճակի մասին եզրակացության և չափագրական գծագրերի ուսումնական «Դ» մասնաշենքի համար կոնստրուկտիվ սխեման լուծված է քարե կրող պատերով, կոմպլեքս կոնստրուկցիաներով համակարգը, որի ծածկերը հավաքովի ե/բետոնյա բազմանցք սալերով է: Տանիքը քառալանջ է, ծածկույթը՝ թիթեղից:

Ըստ ներկայացված նախագծի մասնաշենքում նախատեսվել են ստորև աշխատանքները՝

ա) **Քանդման աշխատանքներ / ներքին/.**
- Կազմաքանդել ներքին պատերից հին ներկանյութը, կերամիկական սալիկները,
- Հատակների շերտերը,
- Փայտյա դռները իր մասերով,
- Մետաղապլաստե պատուհանները իր մասերով:

բ) **Վերանորոգման աշխատանքներ / ներքին/.**
- Ներքին հարդարում, սվաղում, ներկում, սալիկապատում,
- Դռների և պատուհանների տեղադրում,
- Սան.հանգույցների վերանորոգում,
- Հատակների տեղադրում:

գ) **Արտաքին վերանորոգման աշխատանքներ.**
- Պատերի որմնախարսխի նորոգում,
- Պատերի տուֆաշարվածքի մակերևույթի մաքրում ավազաշիթով,
- Հորվիարների վերականգնում:

դ) **Տանիքային աշխատանքներ.**
- Փայտյա կավարամածի հին փայտանյութի փոխարինում և փայտյա չորսուների ավելացում,
- Փայտամածի մշակում հակահրդեհային և անտիսեպտիկ պաշտպանական քուքերով ,
- Նոր տանիքածածկույթի տեղադրում գունավոր թիթեղից՝ КП21-0,5 մակնիշի:

❖ **2.1.3** - Տաքանցումային «Բ» մասնաշենքը հատակագծում ուղղանկյունաձև է և ունի 72,75x13,40 մ արտաքին չափեր: Այն միահարկ է, որի հարկի բարձրություններն են 3,3 մ:

Ըստ տեխնիկական վիճակի մասին եզրակացության և չափագրական գծագրերի տաքանցումային «Բ» մասնաշենքի համար կոնստրուկտիվ սխեման լուծված է քարե կրող պատերով, կոմպլեքս կոնստրուկցիաներով համակարգը, որի տանիքածածկը հավաքովի ե/բետոնյա բազմանցք սալերով է: Տանիքը քառալանջ է, ծածկույթը՝ թիթեղից:

Ըստ ներկայացված նախագծի մասնաշենքում նախատեսվել են ստորև աշխատանքները՝

**ա) Քանդման աշխատանքներ / ներքին/.**

- Կազմաքանդել ներքին պատերից հին ներկանյութը, կերամիկական սալիկները,
- Հատակների շերտերը,
- Փայտյա դռները իր մասերով,
- Մետաղապլաստե պատուհանները իր մասերով:

**բ) Վերանորոգման աշխատանքներ / ներքին/.**

- Ներքին հարդարում, սվաղում, ներկում, սալիկապատում,
- Դռների և պատուհանների տեղադրում,
- Սան.հանգույցների վերանորոգում,
- Հատակների տեղադրում:

**գ) Արտաքին վերանորոգման աշխատանքներ.**

- Պատերի որմնախարսխի նորոգում,
- Պատերի տուֆաշարվածքի մակերևույթի մաքրում ավազաշիթով,
- Հորվիարների վերականգնում:

**դ) Տանիքային աշխատանքներ.**

- Փայտյա կավարամածի հին փայտանյութի փոխարինում և փայտյա չորսուների ավելացում,
- Փայտամածի մշակում հակահրդեհային և անտիսեպտիկ պաշտպանական քուքերով,
- Նոր տանիքածածկույթի տեղադրում գունավոր թիթեղից՝ КП21-0,5 մակնիշի:

## *2.2. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՄԱՍԵՐ*

**2.2.1. Ջրամատակարարում և կոյուղի.**

Նախագծով նախատեսվել է ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկի Շահինյան փողոց, 6-րդ նրբանցք հ.5 հասցեում գտնվող թիվ 1 միջնակարգ դպրոցի ներքին ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքները, որի համար հիմք են հանդիսացել ճարտարապետաշինարարական գծագրերը և տեխնիկական պայմանները:

Ներկայացված նախագծով ջրամատակարարում և կոյուղի նախագծային մասում նախատեսվել են հետևյալ ներքին համակարգերը.

- Սառը ջրամատակարարում,
- Կենցաղային կեղտաջրերի հեռացում:

**Սառը ջրամատակարարում.**

Ներկայացված նախագծով դպրոցական համալիրի ջրամատակարարման համակարգը փակուղային է, ստորին բաշխման:

Նախագծով օգտագործվող խողովակների, սարքերի և սարքավորումների աշխատանքային ճնշումը ընդունվել է 10,0 մթն (1ՄՊա) է:

Ըստ նախագծի խմելու ջրի կանգնակի, դրանից սնվող բոլոր ճյուղերի, ինչպես նաև զուգարանակոնքը և լվացարանը սնուցող ջրամատակարարման խողովակների վրա նախատեսվել են տեղադրել փականներ:

Նախագծով շինության ներքին սառը ջրամատակարարման ցանցը նախատեսվել է իրականացնել պոլիպրոպիլենային de25-32 մմ-անոց խողովակներից:

**Տնտեսական (կենցաղային) կոյուղի.**

Ներկայացված նախագծով կոյուղու ներքին ցանցը նախատեսվել է իրականացնել de50-110 մմ-անոց կոյուղու պոլիէթիլենե խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով:

Նախագծով կոյուղու կանգնակների վրա նախատեսվել են ստուգիչներ:

Ըստ նախագծի կոյուղու թողակները նախատեսվել են իրականացնել պոլիէթիլենե խողովակներից, որոնք էլ միացվելու են կոյուղու բակային ցանցին:

**2.2.2. Ջեռուցում և օդափոխություն.**

ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի մասնաշենքի նախագծի ջեռուցման և օդափոխության մասը մշակվել է համաձայն Պատվիրատուի առաջադրանքի և ճարտարապետական գծագրերի հիման վրա:

Նախագծով հաշվարկների համար ընդունվել է ներքին ջերմաանջատումները սարքավորումներից՝ համակարգիչ -150Վտ, սառնարան – 300 Վտ, լուսավորությունից՝ 10 Վտ 1մ², մարդկանցից՝ 100 Վտ (մեկ մարդու համար):

Նախագծով սանհանգույցներից աղտոտված օդի հեռացումը նախատեսվել է առաստաղային օդամուղների օգնությամբ:

Ներկայացված նախագծով օդափոխության համակարգերի հավասարակշռումը հնարավոր դարձնելու համար նախատեսվել են օդի հոսքի ավտոմատ կարգավորիչ փականներ:

Նախագծով օդի արագությունը օդատարներում չի գերազանցում 5մ/վրկ:

Նախագծով ջեռուցման համակարգը նախատեսվել է գոյություն ունեցող կաթսայատնից, որտեղից ջերմամատակարարումը խողովակներով ապահովում է շինության ներքին սենքեր ջեռուցումը կատարվում է ջեռուցման մարտկոցներով:

Ներկայացված նախագծով ջեռուցման համակարգում, որպես ջերմակիր է հանդիսացել ջուրը՝ որպես հաշվարկային ջերմաստիճան ընդունվել է՝ 80-60˚C ջեռուցման ժամանակաշրջանում: Ըստ ներկայացված հաշվարկի ջերմային կորուստները «Ա» մասնաշենքի համար կազմում է 140 կՎտ, «Բ» մասնաշենքի համար՝ 25 կՎտ, իսկ «Դ» մասնաշենքի համար՝ 72 կՎտ:

Ըստ նախագծի խողովակները նախատեսվել են անցկացնել խրամուղիների միջով, որոնք ամրացվել են անշարժ և շարժական հենարանային խարիսխներով:

Ներկայացված նախագծով ջեռուցման համար նախատեսվել են պոլիպրոպիլենե d=20-50 մմ-անոց խողովակներ, ջերմամեկուսացումը նախատեսվել է ռետինե հումքով խողովակով և ինքնակպչուն մեկուսիչներով:

**2.2.3. Էլեկտրատեխնիկական մաս.**

Նախագիծը մշակվել է համապատասխան ПУЭ-99 և ՀՀՇՆ 31-03.01-2014 դրույթների:

Նախագծով դպրոցի էլեկտրամատակարարումը նախատեսվել է իրականացնել տրասֆորմատորային ենթակայանից:

Ըստ նախագծի էլ.մատակարարման հուսալիության աստիճանի շինության հոսանքապառիչները դասվել են երկրորդ կարգի:

Նախագծով դպրոցի սնուցումը նախատեսվել է իրականացնել թվով երկու մալուխային գծերով:

Ըստ նախագծի էլ.լուսավորությունը նախատեսվել է իրականացնել հետևյալ տեսակներով.

- Բանվորական,
- Վթարային-էվակուացիոն:

Ներկայացված նախագծով բաշխիչ վահանից նախատեսվել է սնող գծերը անցկացնել դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ:

Նախագծով սնող գծերը նախատեսվել է իրականացնել պղնձե մալուխներով, իսկ խմբային ցանցը՝ ВВГ нг-LS մակնիշի մալուխով՝ ճկուն խողովակների մեջ:

Նախագծով դասասենյակներում անջատիչները և վարդակները նախատեսվել են տեղադրել հատակից 1,8 մ բարձրության վրա, այլ սենյակներում՝ հատակից՝ 0,8 մ, վահանակները՝ 1,5 մ բարձրության վրա, հատուկ պատրաստված խորշերի մեջ:

Ըստ նախագծի հրահանգվել է լուսատուների և վարդակների սնուցումը իրականացնել 3 հաղորդալարերով՝ ներառյալ PE հաղորդալարը:

Նախագծով ընդունվել է TN-C-S համակարգը, որպես պաշտանիչ միջոց նախատեսվել է իրականացնել հողանցման օջախ Օհմ դիմադրությամբ: Դպրոցական մասնաշենքերի անվտանգությունը ապահովելու համար կիրառվել են համալիր միջոցներ՝ էլ.էներգիայի բաշխումը եռաֆազ ցանցում նախատեսվել է կատարել հինգ հաղորդալարով (L1,L2,L3,N,PE), միաֆազ ցանցում՝ երեք հաղորդալարով (L1,N,PE) անցկացնելով առանձին PE հաղորդալարը, սկսած մուտքի վահանից:

**2.2.4. *Հակահրդեհային ազդարարման համակարգ*.**

Ներկայացված նախագծով ներկայացված մասի աշխատանքային գծագրերը մշակվել են ճարտարապետական գծագրերի և տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Ըստ նախագծի ավտոմատ հրդեհի ահազանգման համակարգը նախատեսվել է՝

- Հրդեհի կենտրոնի հայտնաբերման համար,
- Ազդարարման համակարգի միացման համար:
- Օդափոխության և ծխահեռացման համակարգերի ղեկավարման համար:

Ներկայացված նախագծով համակարգը բաղկացած է ընդունիչ հսկիչ սարքից՝ РУБЕЖ-2ОП R3 մակնիշի /2 օղակ, ամեն օղակին մինչև 250 հասցեային տվիչներ և այլ հասցեային սարքավորումներ միացնելու հնարավորությամբ/, որոնք տեղադրվում են պատի վրա, տեղակայման բարձրությունը h=1500մմ: Վահանակին միացվում են հասցեային օպտիկական ազդասարքերը, հասցեային շարժման և մագնիսակոնտակտային ազդասարքերը, հասցեային հրդեհի՝ ձեռքով գործարկվող ազդասարքերը, հասցեային լուսաձայնային ազդարարիչները, հասցեային ինտերֆեյսային մոդուլը, հասցեային սարքը՝ անալոգային ազդասարքերը հասցեային սարքին միացնելու համար, ռելեների մոդուլները՝ ահազանգի դեպքում կատարող մեխանիզմներին գործարկելու համար:

Նախագծով հրդեհի ահազանգման համակարգի ընդունիչ հսկիչ սարքը նախատեսվել է տեղակայել շինության առաջին հարկում: Ընդունիչ հսկիչ սարքը համալրված է «ԱԻՆ» միանալու բջջային կապով աշխատող ավտոմատ զանգահարող սարքով:

Ներկայացված նախագծով տվյալ շինությունում, բացառությամբ սան.հանգույցների, թաց գործընթացով և 2 մ² պակաս մակերեսով սենքերի բոլոր տարածքներում նախատեսվել են հասցեային ծխի ազդասարքեր, իսկ միջանցքներում, էվակուացիոն ելքերի և աստիճանավանդակների մոտ նախատեսվել են հրդեհի հասցեային ձեռքի ազդարարիչներ՝ h=1500մմ: Մարզասրահում նախատեսվել

են ծխի գծային ազդասարքեր՝ ռեֆլեկտորով, ազդասարքերը տեղակայվել են h=5400մմ բարձրության պատի վրա, իսկ ռեֆլեկտորները՝ h=7200մմ բարձրության վրա ազդասարքի դիմացի պատին:

Ըստ նախագծի շինության ընդհանուր օգտագործման տարածքներում նախատեսվել են լուսաձայնային ազդարարիչներ՝ ահազանգի դեպքում լուսաձայնային ինդիկացիայի համար, տեղակայման բարձրությունը h=2800մմ:

Նախագծով բոլոր հասցեային ազդասարքերի, ազդարարիչների և այլ հասցեային միավորների միացումը հասցեային օղակին նախատեսվել է կատարել КСРЭВнг(A)-FRLS 2x0.50 մակնիշի, այրում չտարածող մալուխներով և նրանց սնումը կատարել հասցեային օղակից: Մալուխները անց են կացվում պատերի և առաստաղի վրայով՝ բաց կամ սվաղի տակ:

Համաձայն գործող նորմերի հրդեհի ահազանգման համակարգի էլեկտրասնուցումը հուսալիության տեսանկյունից վերագրվում է 1-ին կատեգորիայի,ըստ որի նախագծով էլեկտրասնուցման կազմակերպումը նախատեսվում է անխափան սնուցման աղբյուրներից, ընդունելով՝

- Հիմնական սնուցումը 220Վ 50Հց,
- Պահուստային սնուցումը՝ 2 մարտկոցներից՝ 12Վ 7Ա:

Նախագծով նախատեսվել է, որ հիմնական սնուցման բացակայության դեպքում մարտկոցներում համապատասխան տվիչները թույլ են տալիս համակարգի աշխատունակությունը պահպանել հերթապահ ռեժիմում 24 ժամ, իսկ ահազանգի ռեժիմում՝ 3 ժամ:

**2.2.5. Զանգի և ժամացուցային համակարգ.**

Նախագծով ժամացույցային համակարգը նախատեսվել է ապահովել համակարգին միացված ժամացույցների վրա ակտուալ ժամանակի միաժամանակյա ցուցադրում և ուսումնական հաստատության դասաժամանակի և զանգի կառավարում, նախապես ծրագրավորված ժամանակացույցով:

Ըստ նախագծի այն բաղկացած է «ղեկավարող» և «ղեկավարվող» ժամացույցներից, որոնք իրար միանում են 2x0,75 մալուխով, ինչպես նաև զանգերից, որոնք նույնպես միանում են համակարգին՝ 2x0,75 մալուխով:

Նախագծով «Ղեկավարվող» ժամացույցների և զանգերի տեղադրման բարձրությունը միջանցքներում նախատեսվել է հատակից h = 2600մմ, իսկ մարզա և հանդիսությունների դահլիճում՝ h = 3500 մմ բարձրության վրա:

## *2.3. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*

Դպրոցի համալիրի տարածքում նախագծով նախատեսվել են ստորև աշխատանքները.

- Խաղահրապարակների և ֆուտբոլի դաշտի խոտածածկի և դրանց տակ շերտերի տեղադրում,
- Անցուղիների սալիկապատում,
- Սալվածքի կառուցում (Брекчиа),
- Սիզամարգերի կտրում և կանաչապատում,
- Ճանապարհային պաստառի վերականգնում մանրահատիկ ա/բետոնից,
- Գոյություն ունեցող ցանկապատի նորոգում, այդ թվումՙ ֆուտբոլի դաշտի,
- Պողպատե խողովակների դռնակի տեղադրում,
- Դրոշակաձողի տեղադրում:

Նախագծային փաստաթղթերում առկա են վրիպակներ և բացթողումներ, մասնավորապես.

- Բացակայում է ընդհանուր բացատրագիրը,
- Տրված չէ թերությունների ակտով նախատեսված մասնաշենքերի աշխատանքների ցանկը:

### 2.4. ԾԱՎԱԼՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ներկայացված աշխատանքային նախագծով, նախահաշվային **առաջին փուլի** ընդհանուր արժեքը կազմում է 456 963,80 (չորս հարյուր հիսունվեց միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր) հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ ԱԱՀ-ն:

Հաշիվները կատարված են ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի N 879-Ն որոշման հավելված N 8-ի: Այն նյութերի արժեքները, որոնք ներառված չեն ինֆորմացիոն տեղեկագրում, ձևավորվել են շուկայական միջինացված գների և հարցումների արդյունքում:

| | |
|---|---|
| Անցումային գործակիցները՝ | |
| - աշխ. ծախսերի համար | 2478.61 |
| - մեքենաների շահագործման համար | 3018.17 |
| Վերադիր ծախսերը կազմում են | 13,3% |
| Շահույթը կազմում է | 11% |

Նյութերի արժեքը ընդունված է համաձայն ինֆորմացիոն տեղեկագրի (№ 06), հրատարակված 2025թ. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքի կողմից:

### 3. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ելնելով վերոգրյալից «Շին-ՏԱԼԳ փորձագետ» ՍՊԸ-ի փորձաքննությունը ուսումնասիրելով ներկայացված աշխատանքային նախագծի *առաջին փուլի* ճարտարապետական, կոնստրուկտորական և ինժեներական մասերը, նշում է.

ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, «Մարալիկ բնակավայրի Հ. Շահինյան փողոց, 6-րդ նրբանցք հ. 5 հասցեի թիվ 1 դպրոցի վերանորոգման աշխատանքների» նախագծանախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է հաստատման:

*Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և տրվում փորձագիտական դրական եզրակացություն:*

Օբյեկտի **առաջին փուլի** շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 456 963,80 (չորս հարյուր հիսունվեց միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր) հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ ԱԱՀ-ն:

Նախագծում տեղ գտած թերությունները և վրիպակները շտկել աշխատանքային կարգով շինարարության ընթացքում:

***Փորձագետ՝*** [signature] ***Հ. Բաբայան***